



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

ք.երևան

« 07 07 » 2020թ N^o 756. ՁԿ

ԼՐԱՅՈՒՑԻՉ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՆԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 34-րդ, 35-րդ, 67-րդ, 68-րդ հոդվածներով և հիմք ընդունելով
Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 27-ի N 852-Ա
որոշումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ավելացնել «Հայաստանի Պետական Հետաքրքրությունների Ֆոնդ» փակ
բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը՝ լրացուցիչ տեղաբաշխելով 1000
(մեկ հազար) դրամ անվանական արժեքով 5241 (հինգ հազար երկու հարյուր քառասունմեկ)
հատ հասարակ բաժնետոմսեր (այսուհետ՝ Բաժնետոմսեր):

2. Սահմանել, որ

1) Բաժնետոմսերը ձեռք է բերում Հայաստանի Հանրապետությունը՝ դրանց դիմաց
վճարելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 27-ի N
852-Ա որոշման հավելվածով նախատեսված 5241 000 (հինգ միլիոն երկու հարյուր
քառասունմեկ հազար) դրամ արժեքով շարժական գույքով, սույն հրամանն ուժի մեջ մտնելուց
հետո մեկ ամսվա ընթացքում,

2) Բաժնետոմսերը տեղաբաշխվում են դրանց անվանական արժեքով՝ յուրաքանչյուրը
1000 (մեկ հազար) դրամով:

3. Հաստատել «Հայաստանի Պետական Հետաքրքրությունների Ֆոնդ» փակ
բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնարարել «Հայաստանի Պետական Հետաքրքրությունների Ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝

- 1) ապահովել ընկերության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը:
- 2) «Հայաստանի Պետական Հետաքրքրությունների Ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխության պետական գրանցումից հետո երկամսյա ժամկետում ապահովել ընկերության բաժնետերերի ռեեստրում սույն որոշումից բխող փոփոխությունների կատարումը:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Ա. Ավանեսյանին:




ՏԻԳՐԱՆ ԽԱՂԱՏՐՅԱՆ

Հավելված
«ՀՀ Էկոնոմիկայի նախարարի
2020թ. 04 04 ի
N 956-Ն հրամանի»

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ս Է

Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարի 2020թ.
թիվ _____ հրամանով

«ՀՀ Էկոնոմիկայի նախարար՝


Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կազմված է — — 2020թ. և բաղկացած է 1 թերթից
Տպագրված է ընդամենը _____ օրինակ
ՕՐԻՆԱԿ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ս Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՈՒԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 22.05.2019թ.,
գրանցման N 286.120.1075203
հարկ վճարողի հաշվառման համար 02697868
22.05.2019թ. գրանցված կանոնադրության
N _____ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի տարածքային բաժնի կողմից
«___» _____ 2020թ.

**«Հայաստանի Պետական Հետաքրքրությունների Ֆոնդ» փակ բաժնետիրական
ընկերության**

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(փոփոխություն)

«Հայաստանի Պետական Հետաքրքրությունների Ֆոնդ» փակ բաժնետիրական
ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

Ընկերության կանոնադրության 6.1 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«6.1 Ընկերության կանոնադրական կապիտալը արտացոլում է նրա պարտատերերի
շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության
կանոնադրական կապիտալը կազմում է 5.341.000 (հինգ միլիոն երեք հարյուր
քառասունմեկ հազար) դրամ, որը բաժանված է 5341 (հինգ հազար երեք հարյուր
քառասունմեկ) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 1000 (մեկ
հազար) դրամ անվանական արժեքով:»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Հայաստանի Պետական
Հետաքրքրությունների Ֆոնդ» ՓԲԸ 22.05.2019թ. գրանցված կանոնադրության
բաղկացուցիչ մասը: